


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն  
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ  
Պազար Մուրուր, ԳԱՀԻՐԷ

Direction du journal PAROS  
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տրեկն. ողջ դն. 80  
» » վեցամսեայ » 50  
Օսար երկիրներ տարեկան ծրագր 25  
» » վեցամսեայ » 14  
Թղթասարի ծախքը խմբագրու-  
թեան վրայ է :

Խմբագրութեանն ուղղուած նա-  
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՀԱՄԱՐԱՏՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի Ազգ. Վարչութիւնը վերջապէս  
փորձ մը կընէ Սահմանադրութեան համաձայն  
կազմակերպութիւն մը տալու տեղական ժո-  
ղովներուն, ազգային տուրքի հաստատմամբ  
որ հիմը պիտի ըլլայ քուէարկութեան իրա-  
ւունքին: Այս կերպով, ժողովուրդին ստուար  
մեծամասնութիւնը ներկայացնելու պիտի կոչ-  
ուի Երեսփոխանական ժողովը որ ամբողջաց-  
ուելու պէտք ունի. եթէ հեռուէն հետաքրք-  
րուող ազգային մը իմանար որ «Եգիպտոսի  
հայ գաղութին երեսփոխանութիւնը» պատ-  
կառելի բացատրութիւնը՝ իրականութեան  
մէջ կը նշանակէ տասնամեակու ակնարկա-  
նէր միայն, որոնք հազիւ տարին չորս-հինգ  
անգամ կը գումարուին, պարզապէս պատ-  
րանք պիտի կրէր. մեռածներու հրաժարած-  
ներ կան երեսփոխաններուն մէջ որոնց յա-  
ջորդները պէտք է ընտրել. այս հիմնական  
գործողութեան կատարումէն ետք, Գաղաքա-  
կան ու Ընդհանուր ժողովներուն պարտքն է  
համարատուութեան ու համարառութեան ըս-  
կողունքը գործադրել աւելի լայն սահմանի  
մը մէջ, այն է հանրութիւնն ալ մասնակից  
ընելով անոր: Տարիները կը բոլորին, վար-  
չութիւնները կը փոխուին կամ կը վերահաս-  
տատուին. տեղեկագիր ու հաշիւ կը պատ-  
րաստուին, կը ներկայացուին ու կը վաւերաց-  
ուին Առաջնորդարանի շրջափակին մէջ — մէկ  
օրինակն ալ Պատրիարքարան ղրկուելով ան-  
շուշտ, — և սակայն տեղացի ազգայինները  
նոյնքան գիտակցութիւն կունենան այդ ամե-  
նուն վրայ որքան ունին Հայէջաստանի ելե-  
մուտքին կամ Անգլիոյ պանդային հաշիւներուն  
վրայ:

Կը կարծենք թէ ա՛լ ժամանակը եկած  
է այս գրութիւնը բարեփոխելու: Վարչութիւն  
մը իր սպասած ազդեցութիւնը ունենալու  
համար՝ պէտք է նախ և առաջ ընդունի հա-  
մարատուութեան ու հաշուետուութեան սկզբ-  
բունքը: Գրամը զոր կը մատակարարէ, գոր-  
ծերը զորս կը տնօրինէ, եկեղեցին ու դպրոցը  
զոր կը հոգայ՝ ազգինն են և ազգը պէտք է  
ժանօթանայ այդ ամենուն: Այս տեսակ հրա-  
պարակային առաջարկ մը եղած ատեն՝ սխալ  
գաղափար մը կը պատէ շատերուն միտքը,  
զանազան շարժառիթներ ենթադրել տալով  
որոնց մէջ առաջին տեղը չի պիտի բռնէր վրա-  
տահութիւնը: Ընդհակառակը, մենք մեր մա-

սին կը յայտարարենք թէ նոյն իսկ այդ վրա-  
տահութեան զգացումն է որ կը դրդէ զմեզ  
հրաւիրել Եգիպտոսի Ազգ. Վարչութիւնը պար-  
բերաբար ժողովուրդին աչքին առջեւ դնել  
իր գործառնութիւնները: Կեդրոնին մէջ, Պո-  
լիս, այսպէս եղած է և ամենէն աւելի քննա-  
դատուած վարչութիւններ իսկ իրենց համարա-  
տուութիւնն հրատարակելով՝ բարերար ներ-  
գործութիւն մը ունեցած են միտքերու վրայ  
և թիւր ու սխալ կարծիքներ ուղղած:

Իբրեւ առաջին ապացոյց մը այս առա-  
ջարկի ընդունելութեան, զոր տարակոյս չու-  
նինք թէ Առաջնորդարանը բանաւոր պիտի  
նկատէ ու անկեղծ զգացումէ մը բխած, կը  
սպասենք որ վերակազմեալ Վարչութիւնն  
հրատարակութեան յանձնէ նոր շրջանի վեց-  
ամսեայ գործառնութեանց տեղեկագիրը,  
զայն Ընդհ. ժողովոյ բովէն անցունելէ ետք  
բնականաբար:

ԳՐԶԻ ՔՍԱՀԱՃՈՅԷ

ՕՍԻՐԻՍ ԱՌ ՌԱՄՍԷՍ

Ձմեռուան մօտենալը կըզգաս ինք, սիրելիդ իմ  
Ռամսէս:

Ես ալ ի՞նչ ապուշ եմ, տե՛ս: Հագիւ տարիէ  
մը ի վեր Եգիպտոս բնակողին ի՞նչպէս կարելի է  
հարցնել թէ ձմեռն գալը կը նշմարէ:

Մոգի, թոզի, և... ներէ որ երբորդը զանց  
ընեմ, այս երկրին մէջ մարդիկ այն գաղափարը ու-  
նին եղանակներուն վրայ ինչ որ ունին Հայաստանի  
բնակիչները... Կեանքի ապահովութեան վրայ:

Բան մըն է կերթայ, անունները կը փոխուին,  
ժամանակը կանցնի, կը ծնին, կը մեռնին, այս օր-  
ուան կը յաջորդէ վաղը և դարձեալ միեւնոյնը կը  
մնան իրերը և մարդիկ:

Պոլիս անանկ չէ: Ձմեռնամուտը événement  
մըն է:

Սաստիկաշունչ եղանակին մերձենալը երկինքին  
գոյնէն կը հասկնաս, խանութներու ցուցափեղէնն  
կը կուսնէ, փողոցներու լպրծուն վիճակէն կը գու-  
շակես, հովանոցներու և լսատիկներու առատու-  
թենէն կը նշմարես և կնոջդ պահանջներէն վստահ  
կըլլաս թէ ձմեռը եկած է:

Հոս, Ռամսէս, ոչ ծառերը տերեւաթափի ու-  
նին և ոչ ծաղիկները կանհետանան. փողոցին մայ-  
թերուն վրայ լեցուն մարդ էայ, կիները իրենց ճե-  
մակ շրջագրեցողներն մէջ կը տատանին տակաւին,  
օդը բաց է և Ալբազարը գոյ:

Ինծի պէս կեանքի ուսանող մը, շարունակ  
դիտող մը, ունայնութեան հետազոտող մը ըլլալու  
եւ՝ անմիջապէս հասկնալու համար թէ հոս Գահիրէի  
մէջ ալ ամառը խոյս տուած է տեղի տալու համար  
օթէլներու եղանակին:

Ջերմաչափին սնդիկը որքան վար իջնայ՝ կառ-  
քերուն գինը այնքան կը բարձրանայ, օդը որքան

անօրանայ՝ մայրագնացներու (trottin) խումբը այն-  
քան կը խտանայ փողոցներուն մէջ, բազմութիւնը  
կը շատնայ, կը բազմանայ միեւնոյն ատեն գրպա-  
նահատներուն թիւը և հաճոյքի միջնորդներուն պատ-  
կառելի դասը:

Ահա՛ ես ինչէն գիտեմ՝ թէ կատարեալապէս ձը-  
մեռուան մէջն ենք, սիրելիս, մինչդեռ դուն աչքդ  
երկինք, ձեռքդ ճակտիդ վրայ, վհատօրէն և քրտին-  
քի մէջ ողորդուած՝ կը կարծես թէ ամառը ոչ սկիզբ  
ունի հոս և ոչ ալ վերջ:

Պոլիս հարբուխ ըլլալուս պէս խաչը եկաւ  
կըսէի, մինչդեռ հոս ցուրտ եղանակին եկած ըլլալը  
այն կառքերէն կը հասկնամ որոնք երազի պէս աչ-  
քիդ առջեւէն կանցնին և որոնց մէջ զոյգ մը հա-  
րէմներ իրենց շրթներուն ժպիտը և մարմնոյն բու-  
րումը թող կուտան որ դուրս հոսին կաթիլ առ կա-  
թիլ, կառքին կիսարայ մետաքսէ վարագոյրին ե-  
տեւէն:

Խոստովանե՛ թէ աւելի բանաստեղծութիւն կայ  
հոս քան թէ հոն ուր յիշատակներէ զատ ոչինչ  
թողած ենք գեղեցիկ:

\* \*

Հարբուխ ըսած ատենս միտքս բան մը եկաւ:  
Քիթին շատ մօտ նիւթի մը վրայ պիտի խօսիմ՝  
քեզի այսօր:

Գտի՛ր տեսնեմ ի՞նչ է այն որ ամենէն մօտը  
կը գտնուի քիթին:

Պէտքերը, այտերը, շրթունքները, յոնքերը,  
չէն, սիրելիս, ասոնցմէ ոչ մին է. թաշկինակին  
վրայ պիտի ճառեմ քեզի այսօր, իբր թէ Ընթեր-  
ցասիրայ ընկերութեան լսարաններուն ներկայ գտ-  
նուէինք:

Ուրեմն ներէ՛ եթէ քեզ քիչ մը ձանձրացնեմ:  
Գիտես որ ասկից 400 տարի առաջ թաշկինակ  
կը գոյութիւն չունէր և այդ թուականէն առաջ  
երբէք քիթ մը թաշկինակին բռնակալութեան չէր  
հանդուրժած:

Վենետիկցի կին մըն է որ առաջին անգամ  
Ֆացցօլեդոյի այսինքն թաշկինակի գործածութիւնը  
ներմուծեց Եւրոպայի մէջ:

Հետեւաբար իտալիան է թաշկինակին օրօրանը  
ինչպէս Եսլովա աւազակներունը:

Եւ քանի մը տարի ետք, Ալպեան գագաթնե-  
րէն սաւառնելով իր մուտքը ըրաւ ի Ֆրանսա, Հան-  
րի Բ. օրով:

Բայց մի՛ կարծեր թէ այն ատեն ալ հիմակ-  
ուան պէս հատը բսան փարայի կը ծախուէին փո-  
ղոցին մէջ. ընդհակառակը, քիթն ամբողջ ծածկող  
այդ շարժուն քօղը, երբ ծնաւ, թանկագին կերպա-  
սի կտոր մըն էր, սուղ բանուածքներով շրջապատ-  
ուած, զոր հարուստ մարդիկ՝ միայն կրնային գոր-  
ծածել ինչ որ կապուցուցանէ թէ անկէց ի վեր  
քիթին վարկը շատ կտորած է:

Իշխանահիւներուն, պալատական տիկիներուն  
և այն ժամանակուան ազնուաշունքներուն տրուած  
էր գրպաններն մէջ՝ ունենալ այդ ծանրագին քօղի  
կտորը:

Ազնուականները իրենց նշանածին թաշկինակ  
մը ընծայ կուտային, և մինչեւ իսկ Տրէզուարի իշ-  
խանութիւնը 1595ին արգիլեց հասարակ ժողովուրդ-  
եան թաշկինակի կիրառութիւնը:

Բայց կամաց կամաց թաշկինակը սկսաւ ընդ-



Հանրամասն և այս օրուան օրս մարդոց գրպանին մէջ աւելի թաշկինակ կայ քան թէ ստակ, բան մը որ բթի խանձարութեն նուազ կարեւոր չէ:

Թաշկինակին կենսագրութիւնը քեզ ընելէս ետքը, ինծի բան մը կը մնայ, այն է՝ զարմանալ թէ Ֆայցօլէդօյի գիտէն առաջ ի՞նչ կընէին մարդիկ:

Առանց հացի ապրիլ կը հասկնամ. մարդս բաթաթէսով ալ օրը կրնայ անցընել. բայց առանց թաշկինակի . . . :

Հետեւաբար խիստ գոհ եմ ու ծնած ըլլալուս. եթէ երբէք ասկից հինգ հարիւր տարի առաջ աշխարհք գայի, դատաւարտուած պիտի ըլլայի տեսնել Տանթէի Պէթրիսը և Բէթրարքի Լաուրան թաշկինակին պաշտօնը իրենց . . . մատներուն յանձնելու վիճակի մէջ:

ՕՍԻՐԻՍ

### ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Ազգ. Պատրիարքարանի գործերուն ու ընթացիկ վրայ շա՛ս սկստ ծանօթութիւն մը պիտի ունենայինք, եթէ Պոլսոյ յրազրութիւնը եղած ըլլար մեր միակ աղբիւրը. բարեբաղդաբար, անգլիական կարեւոր քերթերու քրքակիցներ՝ յունական եւ ուրիշ միջազգային հարցերու մէջսեղ կը հետաքրքրուին դեռ Հայոց գործերով ու ասեմ ասեմ կողմէն հեռագիրներ որոնք ուշադրութենէ չեն կրնար վրիպիլ: Այսպէս, Թայմզի վերջին թիւերէ մէկուն մէջ կը գտնենք տեղեկութիւն մը ոսկից կերելի թէ Օրմանեան Պատրիարք փափուկ կացութեան մէջ կը գտնուի եղեր, տեսնելով որ հակառակ պայտասան կողմէ իրեն եղած մեծարանքներուն՝ սակաւին չի գործարարուի այն խոստում որուն համեմատ խառն յանձնաժողով մը պիտի դրկուէր գաւառները: Պատրիարք եւ Վարչութիւն աւստալոր նիստ մը ընելով՝ որոշեցին ինչ որոշեմ մը ներկայացնել Սուրբանի, հետեւեալ հինգ խնդիրներու մասին կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրելով:

Ա. Օգնութիւն ու պաշտպանութիւն որբերուն: Բ. Կապտի բաշխում այն գաւառներու հայերուն որոնք ծայրայեղ չքաւորութեան մատնուած են: Գ. Թոյլտուութիւն հայերուն՝ քաղքէ քաղաք երթելու իրենց գործերուն բերմամբ:

Ե. Արգիւն գաւառներու թուրք պաշտօնատարներուն՝ հայերը հարստահարելէ:

Պատրիարք անձամբ պայտաս պիտի ստանի յանձնէ այս խնդրագիրը, յայտարարելով որ այն պարագային ուր կատարեալ գոհացում չի տուի անոնց, ինք եւ Վարչութիւնը հրաժարելու հարկին մէջ պիտի գտնուին:

Ինչպէս կը տեսնուի, Պատրիարքարանի խնդրանքները շա՛ս համեմատ տախտակի մը մէջ անհիմարած են, եւ մարքեղի է որ կառավարութիւնը գոնէ անոնց մասին ազդու տեղեկութիւն մը ընելու բարի տրամադրութիւն ունենայ Պատրիարքի մը նկատմամբ որ հաշտարար փառաբանութեան մը հետեւեալ իր ընտրութեան առաջին օրէն:

### ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Մեր անկողնակալութենէն կը խնդրուի հետեւեալին հրատարակութիւնը:

Պարոն Խալապի,

Անցեալ շաբաթ Առաջնորդարանի բարապանը ձեր Այտնութեան նիւթ ընելով՝ անոր կարգով չի գիտարար նշանակած եւ Քաղաքական Ժողովին ու ժողովները հրաւիրած էիք՝ այդ անպատեհութեան վրայ:

Կը ներե՛ք որ պզտիկ դիտողութիւն մըն ալ ես ընեմ այդ մասին:

Բնականաբար ցաւալի է տեսնել ազգային պատեհութեան մը որ իր լեզուն չգիտէր եւ դատարարսի ինքն անոնք որ այդ զանցառութեան հարկ եղած կառուարութիւնը չեն տար. բայց ինչո՞ւ, Պ. Խալապի, ձեր այդ միայն բարապանը կը տեսնէ եւ ասորին կը մոռնա՞ւ ազգային վարչութեան այն անդամները որոնք բարապանէն նուազ գիտեն իրենց մայրենի լեզուն:

Ահա՛՝ ձեզի նիւթ մը որ բարապանէն աւելի կարեւորութիւն ունի:

Ս.Ր.Ս.

Ծ. Խ. — Դիտել կուտանք նամակագիր պարոնին որ աշխարհիս ընթացքը այսպէս է. պզտիկները կը զոհուին միշտ մեծերուն:

Երկրիս վրայ՝ նոյնպէս ծովու տակ այսպէս եղած է. խոշոր ձուկերը պզտիկները կը կլլեն և թաղականները՝ բարա . . . պանները:

### Կ. ՊՈԼՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Նախարարական մասնակի փոփոխութիւն մը կատարուեցաւ նախորդ շաբթուն: Եւրոպական նախարար Նազիֆ փաշա մարտիին վերադառնալ անուանուեցաւ Հասան Ֆէհմի փաշայի տեղ որ կոչուեցաւ հաշտակալութեանց Ատենի նախագահութեան: Իսկ Թէվֆիկ փաշա, որ կը վարէր այս վերջին պաշտօնը, եւմտական նախարար անուանուեցաւ:

— Պոլսոյ թերթերը կը հաղորդեն թէ Վառնայէն վերադարձած 40 հայ գաղթականներ որոնք Ոստիկանութեան Դուռը «արգելուած» էին (զրաքննութեան լեզուով կը նշանակէ «բանտարկուած») Պատրիարքարանի միջոցաւ երաշխաւորութիւն տալով ազատ թողուելու են:

— Նիկոմիդիոյ Առաջնորդ Տ. Ստեփան եպիսկոպոս անցեալ կիրակի Կ. Պոլիս երթալով Օրմանեան Պատրիարքին հետ տեսակցելէ ետք, պաշտական առաջին քարտուղար Թահսին պէյին ներկայացրեց է՝ կայսերական ներում ինքընեւ համար Ատաբազարի Ֆէրիդի գիւղացի 19 և Նիկոմիդիացի 2 ազգայիններու համար որոնք ամբաստանուելով կեղծոնական բանտը տարուած էին: Տ. Ստեփան եպիսկոպոսի խնդիրքն ընդունուելով, այդ քսանըմէկ հայեր արձակուելու ու Առաջնորդին ընկերակցութեամբ Նիկոմիդիա վերադարձելու են:

— Ուսումական դեսպան Պ. Նէլիտօֆ Կ. Պոլսէն մեկնելէ առաջ, մեր Պատրիարքարանն ալ երթալով հրաժեշտի այցելութիւն մը տուեր է Օրմանեան Պատրիարքին:

— Հավասի հեռագիր մը կը հաղորդէ թէ Կ. Պոլսոյ գերմանական դեսպան Պ. Սաուրմա ելլչ Սուլթանին յանձնել է Վիլհելմ կայսեր ինքնագիր մէկ նամակը:

— Սթանսաւսի տեղեկութեանց հայելով՝ Դուռընոր ծանուցագիր մը ուղղուեց Տէրութիւններուն Կրէտէի մասին, յայտարարելով թէ եւրոպական զօրքերու պաշտպանութիւնն անբաւական է կղզիին համար:

Միւս կողմէ Տէյրի Նիւսի թղթակիցը կըսէ թէ Սուլթանը մտադիր է Կրէտական խնդիրը մէջտեղ դնել, դեսպաններու վերագարձէն անմիջապէս ետք. բայց, կը յարէ, սխալ է կարծել որ Սուլթանը որոշած ըլլայ ո՛րեւէ ձեւի մը տակ տրուելիք ինքնօրինութեան հակառակիլ:

— Իտալական Թրիպուլիս լրագիրը Կի-

մանայ թէ Լոնտոն տպուող Հոլրիյէթ (Ազատութիւն) թուրք թերթը գաղութացուցեր է իր հրատարակութիւնը, տնօրէնը՝ իր այս հաճոյակատարութեան փոխարէն ստացած ըլլալով Փոքր-Ասիոյ կարեւոր հանքի մը շահագործման մենաշնորհը զոր կը պատրաստուի եղեր վաճառել դրամատէրներու խմբակի մը:

Եւրոպա հրատարակուող թուրք թերթերէն կը մնայ միայն Մէշլէրէթը, ան ալ Ֆրանսէի լեզուով ի Բարիդ, վաճառի պաշտօնական գաղանի ոստիկանութեան պետ Ահմէտ ձէլալետին փաշա յաջողած էր գնել թուրքերէն տառերը որոնք Մէշլէրէթին տպագրութեան կը գործածուէին ի ժընէլ:

— Թյամզին Կ. Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ թէ Իրատէ մը կարգելու օտար երկիր գաղթած հայերուն վերադարձը ի Թուրքիա: Ասկից զատ, մասնաւոր հրահանգներ տրուել են ոստիկանութեան որպէսզի աւելի խիստ կերպով հսկէ Պոլսեանակ հայերուն վրայ:

— Հեռագրական գործակալութիւնները հետեւեալը կը հաղորդեն եւրոպական թերթերուն՝ Թուրքիաբնակ յոյներուն նկատմամբ Սուլթանին ունեցած տրամագրութեանը վերայ:

«Սուլթանը կը շարունակէ ծայրայեղ կերպով բարեացակամ ու առատաձեռն հանդիսանալ Կ. Պոլսոյ յոյն հասարակութեան, Թուրքիոյ յոյներուն ընդհանրապէս և անոնց հոգեւոր պետին նկատմամբ: Արդի Պատրիարքը, Տ. Կոստանդինոս, շատ յարգ ունի երկրորդի պաշտօնը և քանի մը յոյն եպիսկոպոսներ պատուանշան ստացան. Սուլթանը անցեալ օր իր թիկնապահներէն մէկը զրկեց Ֆէնէրի Պատրիարքարանը իմացունելու համար Պատրիարքին թէ բաց ի այն քսան յոյն տղաքներէն որոնք անցեալ տարի ընդունուած էին մայրաքաղաքի բարձրագոյն վարժարանները, կայսերական ծախքով դաստիարակուելու համար, ուրիշ տասն ուսանողներ ալ պիտի ընդունուին, Պատրիարքին ընտրութեամբ: Սուլթանը այս կերպով իր բարեացակամութիւնը ցոյց տալ կուզէ հաւատարիմ յոյն (ռում) ազգին: Յայտնի է որ թուրքերը այս անունը կուտան Թուրքիաբնակ օսմ. հպատակ յոյներուն, զանոնք զանազանելու համար Յուսաստանի հեղինակներէն զորս ետևանը կը կոչեն»:

### ՏԵՂԱԿԱՆ

Սիամի թագաւորը՝ Շուլալոնկըօրն՝ Եգիպտոս կը սպասուի նոյեմբեր 7ին: Աղբըսանդիոյ մէջ պիտի ընդունուի բռնէս Մուհամմէտ Ալի փաշայի կողմէ ու երկու օր պիտի հիւրընկալուի Բասել-Թիւրինի պալատը: Նոյեմբեր 9ին Դահիբէ պիտի գայ ուր պիտի մնայ շաբաթի մը չափ:

— Էյ-Մուշիւր լրագրի տնօրէն-խմբագիր Պ. Սէլիմ Սարգիս իր եօթնօրեայ բանտարկութիւնը լրացուցած և 1000 զրուշ սուգանքն ու դատական ծախքը վճարած ըլլալով, նախընթաց օր արձակուեցաւ: Կըսուի սակայն թէ Եգիպտոսի գերմանական գործակալարը անբաւական կը գտնէ տրուած պատիժը՝ իր վեհապետին դէմ գրուած յօդուածի մը հա-



մար, ու գիւտանագիտական ճամբով գիտողութիւններ պիտի ուղղէ եգիպտական կառավարութեան:

—Անգլիական «Նորոտ Սթաֆօրտայր րէ-ճիմէնդ» գունդը որ երկու տարիէ ի վեր եգիպտոսի գրաւիչ բանակին մէջ կը ծառայէր ու մասնակցած էր Սուտանի պատերազմին, երկուշաբթի իրիկուն մեկնեցաւ դէպի Սուէզ ուսկից Հնդկաստան պիտի ուղեւորի: Անոր կը յաջորդէ «Գամէրօն Հայլանտըր» սկովտական վաշտը որ այսօր Գահիրէ կը հասնի յատուկ կառախումբով:

—Տեղական վերաքննիչ ատենանք 1000 զրուշ տուգանքի վերածեց երկամեայ բանտարկութեան վճիռը զոր պատժական ատենանք տուած էր էյ-Պարիս լրագրի տնօրէն-խմբագիր Մուհամմէտ Շուքրի Էֆէնտիի նըկատմամբ:

—Խտիվական խորհրդականներէն Բիէզրի պէյ հրաժարական տուած է որ ընդունուած է:

—Նախարարաց խորհուրդը իր վերջին նիստին մէջ վաւերացուց Ապու-Համէտէն մինչեւ Պէրպէր երկաթուղին երկարելու ծրագիրը և 200,000 ոսկիի վարկ մը տուաւ այս շինութեան համար:

Ապու-Համէտի ու Վատի-Հալֆայի միջեւ շինուած երկաթուղին աւարտած է և բացուած մը կը կատարուի չարթուս մէջ:

—Հնդիկ իշխան Նաէքվար որ Պոմպէյէն կուգայ՝ երկուշաբթի առաւօտ Սիւէզ հասաւ և 24 ժամու օրինական քարանձինս սպասելէ ետք, ցամաք ելաւ: Իշխանը որուն կընկերանան իր երեք զաւակները, երէկ իրիկուն Գահիրէ եկաւ:

—Պանք Օթօմանի վարչութիւնը ուղեր է իմանալ եգիպտոսի ելմտական խորհրդական Պ. Տաւքինսի տրամադրութիւնը, թէ կը հաւանի՞ յաջորդել Սըր Էտկար Վինսընդի:

## ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի օրը Հոռոմի մէջ ցոյցեր տեղի ունեցեր են՝ տուրքերու յաւելման դէմ: Խռովարարները փորձեր են պատնէշներ կանգնել փողոցներուն բերանը և հրագէն պարպեր են ոստիկաններուն վրայ որոնցմէ եօթը վիրաւորուած կայ: ցուցարարներէն մէկը մեռեր է ու երեքը վիրաւորուեր են:

—Բիրէէն կը գրեն թէ ամսոյս 4ին խումբ մը Կրէտացիներ խուժեր են Բրէվէզայէն յիշեալ նաւահանգիստը հասնող աւստրիական չոգենաւի մը մէջ, լսած ըլլալով որ 25 յոյն գերիներ կային հոն՝ Կ. Պոլիս փոխադրուելու համար: Հակառակ նաւապետին բողոքներուն, ամեն կողմ խուզարկեցին՝ բայց չի գտան իւրենց ազգակիցներէն: Այս դէպքի պահուն, խուռն բազմութիւն լեցուած էր Բիրէի քաւաքներուն վրայ և ոստիկանութիւնը հարկադրուեցաւ Աթէնքէն օգնութիւն խնդրել: Ամբողջ օրը բուռն գրգռում տիրեց քաղաքին մէջ:

—Սըր Էտկար Վինսընդ Աթէնքէն Լոնտոն ուղեւորեր է, կերեւայ թէ առանց յաջողելու իր ելմտական ծրագրին մէջ զոր առաջարկած էր հելլէն կառավարութեան:

—Թայմզին բարիգեան թղթակիցը՝ Պ.

տը Պոլիս կը հաստատէ թէ երկար ատենէ ի վեր ոչ մէկ Տէրութիւն եգիպտոսի խօսքը չէ ըրած Մեծն-Բրիտանիոյ, թէեւ կարգ մը եւրոպական թերթեր հակառակը կը հրատարակեն շարունակ: Փրանսա միայն, իբր մէկ տարի առաջ հարցուցեր է Ռուսիոյ թէ ուժ պիտի տա՞յ իրեն՝ եթէ ինքը գործի սկսի: Իբրեւ պատասխան՝ Ջարին կառավարութիւնը խնդրեր է Փրանսայէն որ զգուշանայ Անգլիան գրգռելէ:

—Կրէտացի կուսակցապետներէն շատեր որոնք Յունաստան ապաստանած էին, իրենց հայրենիքը կը վերադառնան: Անոնց մէջ կը գտնուի Պ. Ա. Ֆասիանաքի, Կրէտէի ազգային ժողովին ատենապետը: Այս ժողովք նոր ինքզուգիր մը պիտի ուղղէ ծովակալներուն՝ անգամ մը եւս յայտարարելու համար թէ կղզիին բնակիչները պատրաստ են ինքնօրինութիւնն ընդունելու Եւրոպայի կողմէ դրուած պայմաններով, և թէ մանաւանդ կը փափագին օամ. զօրքերուն հեռացման ու քրիստոնեայ կառավարչի մը անուանման:

—Կ. Պոլսէն կը հեռագրեն Տէյի Մէյլ լրագրին թէ Թուրքիա 30,000 զօրք պիտի ղրկէ Թեսալիա, հիւանդներուն տեղը բռնելու համար:

—Աթէնքի դեսպանները յայտարարեր են նախարարապետ Պ. Ջալիմիսին թէ Եւրոպա կը փափագի այնպէս մը կատարել տալ եւ միտական քոնգրէսը՝ որ Յունաստանի արդար դիւրագագածութիւնը չի վիրաւորուի:

—Տէյի Կրաւիթ կիմանայ թէ Անգլիոյ ծովային նախարարութիւնը հրաման տուեր է փութացնել առաջնակարգ չորս թնդանօթակիրներու շինութիւնը, նաւային օտար կայաններու համար:

## ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Աթէնք, 12 հոկտեմբեր.—Օսմանեան իշխանութիւնը արգիլեցին յունական նաւախուժին՝ Արթայի ծովախորշէն դուրս ելլել, առարկելով թէ զինադաշարը առեւտրական նաւերուն միայն ազատութիւն կուտայ երթեւեկելու և ոչ թէ պատերազմական նաւերուն:

Կ. ՊՈԼԻՍ, 12 հոկտեմբեր.—Դուռը կառավար. կէ Տէրութիւններուն որ Կրէտէի թէ՛ իշխմ և թէ՛ քրիստոնեայ ժողովուրդին ձեռքէն գէնքերն առնուին. նոյնպէս կառավարչէ որ կղզիին կառավարիչը օամ. հպատակ ըլլայ և Դրան կողմէ անուանուի, տէրութեանց հաւանութեամբ:

## ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

Պ. Թրեանց ամիսը 100 ուռայլի ամսականով Պագու ուղեւորեցաւ անցեալ շաբաթ և երէկ Պ. Ալեքսանեան Գահիրէ եկաւ... մեծ յոյսերու պայուսակով մը:

Թրեանցի բարի ճամբորդութիւն մազթած աւտենիս, չենք կրնար Ալեքսանեանի գալատեան անտարբեր մնալ և յուսալ որ թատերական առաջիկայ եղանակը աւելի յաջող պիտի ըլլայ քան անցեալ տարուանը:

Պ. Ալեքսանեան հետը կը բերէ նոր ռէփերուար մը որովքիչ օրէն հայ դերասանական վերակադմալ խումբը իր ներկայացումները տալ պիտի սկսի Ապտէլ-Ազիզ պողոտայի եգիպտական թատրոնին մէջ, ուր մեծ նորոգութիւններ և փոփոխութիւններ կատարուած են:

Թատրոնի վրայ խօսելու առթիւ, հաճութեամբ կը հաղորդենք եգիպտոսի հասարակութեան ծանօթ դերասանուհիի մը, Տիկին Սիրանոյշի փայլուն պայմանագրութիւնը զոր կնքած է Պագուի թատերական յանձնախումբին հետ:

Վեց հարիւր ոսկւոյ գումար մը երաշխաւորուած

է Տիկին Սիրանոյշի՝ թատերական ութամեայ շըրջանի մը համար:

Եթէ երբէք Գահիրէի ամբողջ խումբը որ տասը-տասներկու հոգիէ կը բաղկանայ, այդքան գումար մը կարենայ ձեռք անցընել առաջիկայ ամբողջ եղանակին մէջ, աշխարհիս էն երջանիկ մարդերը պիտի համարին իրենց զիրենք, ակնկալութիւն մը զոր եթէ քաղաքիս հայ հասարակութիւնը ուղէ կրնայ իրականացնել գոնէ ցուցունելու համար թէ Պագուի պէս Գահիրէ ալ ունի իր ինքնիկեմը մասը... գոնէ տարին չորս ամիս:

## ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԼՍԱՐԱՆԸ

Յատաշիկայ շաբաթ գիշեր, 16 հոկտեմբեր, տեղի պիտի ունենայ Ընթերցասիրաց ընկերութեան Դ. լսարանը: Ատենաբանն է Տիար Սիբատ Բիւրատ, նիւթ ունենալով օղիլիկոյ անցեալն ու ներկան: Գաղաղներու միջոցին նուազածութիւն պիտի կատարուի:

Ընկերութեան վարչութիւնը կաշխատի փայլուն ու շահեկան ընծայել այս երեկոյթը: Յայտագիրը պիտի հրատարակենք յաջորդ թիւով:

Հայ վանատաւան մը համար կուգուի պատանի մը որ գիտնայ Արաբեքէն գրել եւ կարդալ ու խօսի եւրոպական լեզու մը կամ հայերէն:

Դիմել ՓԱՐՈՍԻ Խմբագրութեան:

## ԼԱՏԻՆԵՐԷՆԸ՝ ԿԵՆԴԱՆԻ ԼԵԶՈՒ

Ալ Վօլարուկին խօսքը ընող չկայ, հակառակ այն աղմուկին զոր այդ նորաստեղծ լեզուն յարուց լեզուագէտներու աշխարհին մէջ:

Եւ տարբեր կերպ չէ՞ր կրնար ըլլալ. անհատի մը ստեղծած լեզուն՝ մեռնելու, անհետանալու գաւտապարտուած է. ասոր շուտ մը օրինակները տեսնուած են: Լեզու մը կեսնիք ունենալու համար պէտք է որ ժողովուրդներու կողմէ խօսուած և գրուած ըլլայ. երկու պարագայ որոնցմէ զորեկ էր Վօլարուկը:

Սակայն միջազգային լեզուի մը պէտքը զգալի ըլլալէ չի դադրիր: Քանի որ այս օրուան օրս չոգիին շնորհիւ երկրէ երկիր կը փոխադրուինք, երբ երկկարականութիւնը աշխարհիս մէկ ծայրի բնակիչները միւս ծայրի բնակիչներու հետ հաղորդակցութեան մէջ կը գնէ, քանի որ ամեն մարդ իր հայրենիքը նեղ կը գտնէ և կը գաղթէ հոն ուր կենսապայքաւ ըր կը մղէ գինքը, բնական է որ անհրաժեշտ կը դառնայ պէտքը այնպիսի լեզուի մը որ աշխարհիս ամեն կողմը հասկնալի ըլլայ, եթէ ոչ ռամիկ դասէն՝ գոնէ անոնցմէ որ քիչ շատ զարգացած են: Որովհետեւ այդպիսի լեզու մը գոյութիւն չունի, պէտք էր ստեղծել: Այդ պէտքէն ծնունդ առաւ Վօլարուկը, բայց ինչպէս ըսինք, անհատի մը գործն էր այդ և չէր կրնար ծառայել ընդհանուր մարդկութեան:

Հետեւաբար շատ մը իմաստասէրներ մտածեցին թէ այդ լեզուն փնտռելու էր՝ արդէն ծանօթ և կենդանի լեզուներուն մէջ:

Իրենց ընտրութիւնը անգլիերէնին վրայ ինկաւ որ արդի լեզուներուն մէջ ամենէն նուազ կնճոտն է և իր քերականական դիւրութիւններովը ամենէն յարմարն սպասուած նպատակին ծառայելու:

Արդէ զատ անգլիերէնը աշխարհիս գրեթէ ամեն կողմը ծանօթ է. հետեւաբար ամենուն հաւանութիւնը գրաւելու էր, բայց ազգային դիւրագգածութեան խնդիր մը մէջ տեղ կը հանէր որուն դէմ հազարաւոր առարկութիւններ ընողներ գտնուեցան:

Այս գիւտն ալ չի յաջողեցաւ: Բայց միւս կողմէ համաշխարհային լեզու մը ունենալու պէտքը չէր դադրեր գիտական, գեղարուեստական և առեւտրական աշխարհներուն մէջ:

Յանկարծ ամենուն միտքը լատիներէնը ինկաւ. ահա՛ լեզու մը, կըսէին, որ չեզոք, պարզ և դիւրուսանելի է. և իրաւ ալ ադիէ ուրիշ ճամբայ չկար:

Այս կարեւորագոյն հարցով զբաղողները ատոր կայանք տուին և թերեւս հեռու չէ այն օրը ուր ամենքս ալ Վիրգիլիոսի լեզուն խօսինք, իրան մը որ շատ պիտի բարկացնէ քիչկիչներ և դեղագործները, որոնք ինքզինքնին մենաշնորհեալ արարածներ կը կարծէին ահով կամ առով վերջաւորուած բառեր գիտնալուն համար:

Եւ ի՞նչ chic պիտի ըլլայ եթէ վաղը փոխա-



”      Ծով      ”      ”      20      Քրանք